Կարգապահական գործ թիվ ԿԳ-25065

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՆԱՐԻՆԵ ԲԱԳՐԱՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարեն Խալաթյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Միքայել Դանիելյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ Նարինե Մկրտչյանի ներկայացուցիչ, փաստաբան՝ Թամարա Գրիգորյանի,

քննության առնելով փաստաբան Նարինե Բագրատի Մկրտչյանի (արտոնագիր՝ թիվ 2479) **(այսուհետ միասին նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Սարգիս Ալեքյանը **(այսուհետ նաև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ),** հայտնել է, որ 2023 թվականի հունիսի 30-ին փաստաբան Նարինե Մկրտչյանի հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետ նաև՝ Պայմանագիր)**: Պայմանագրի գինը կազմել է 250.000 ՀՀ դրամ, որից 140.000 ՀՀ դրամը վճարել է պայմանագրի կնքման օրը, այնուհետև 2024 թվականի նոյեմբերին վճարել է ևս 20.000 ՀՀ դրամ: Փաստաբանը չի կատարել իր պարտականությունները, դրսևորել է անգործություն, չի իրազեկել գործի ընթացքի մասին և գրեթե չի պատասխանել նամակներին և հեռախոսազանգերին: Դիմողը ստիպված է եղել ժառանգության ընդունման գործընթացն ինքնուրույն իրականացնել:

Դիմողը ներկայացրել է 28.06.2023 թվականին տրված լիազորագրի, 30.06.2023 թվականին կնքված պայմանագրի և անձնագրի պատճենները:

Թիվ ԿԳ-25065-2-Ա
16.07.2025թ.

Դիմողը խնդրել է քննարկել Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը և պարտավորեցնել վերադարձնել իր կողմից վճարված 160.000 ՀՀ դրամը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 21.04.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողների համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Նարինե Մկրտչյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Սարգիս Ալեքյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 21.04.2025 թվականին Փաստաբաններին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 30.04.2025 թվականի բացատրությամբ հայտնել է, որ Դիմողի խնդրանքով վերադարձրել է նրան գործին առնչվող փաստաթղթերը:

Փաստաբանը հավելել է, որ Պայմանագրի շրջանակներում Դիմողը ստացել է ժառանգության իրավունքի վկայագիր, որը ստանալու ընթացքում Փաստաբանի կողմից կատարվել են անհրաժեշտ գործողություններ՝ ուղղված փաստաթղթերում առկա անճշտությունները վերացնելուն, իսկ ժառանգության վկայագիրը Դիմողը ստացել է անձամբ:

Ըստ Փաստաբանի՝ Դիմողը չի վճարել ծառայության գումարի մասը, այնուհետև ցանկացել է լուծել պայմանագիրը: Փաստաբանն առաջարկել է Դիմողին ներկայանալ գրասենյակ պայմանագրի լուծման համար, սակայն վերջինս գրասենյակ ներկայանալու փոխարեն դիմել է Պալատ:

Փաստաբանը հերքել է իրեն վերագրվող՝ Դիմողի զանգերին չպատասխանելու արարքի կատարումը:

Հանձնաժողովի նիստին Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ պայմանագրի առարկան ձևակերպվել է ելնելով այն հանգամանքից, որ Դիմողն ունեցել է որոշ տարաձայնություններ իր քրոջ հետ, իսկ կատարման ենթակա աշխատանքն առավելապես կապված է եղել արտադատական ընթացակարգերի հետ:

Միաժամանակ, Փաստաբանը հայտնել է նաև, որ Դիմողը բնակվում է գրասենյակին մոտ և անհրաժեշտության դեպքում անձամբ այցելել է Փաստաբանին:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 27.03.2025թ. թիվ 131-Ա/ԿԳ-25065 որոշմամբ **փաստաբան Նարինե Մկրտչյանի** նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ **Օրենքի** 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով:

01.04.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Ծովինար Քուրքչյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 30.05.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-3-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 25.06.2025թ. ժամը 19:30-ին, 16.07.2025թ. ժամը 18:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը: ***Սույն փաստը հաստատվում է*** *կողմերի բացատրությամբ, ինչպես նաև 30.06.2023թ. փաստաբանական ծառայությունների մատուցման թիվ 27-32 պայմանագրով:*

2. Պայմանագրի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է հանդես գալ որպես լիազորված անձ ՀՀ բոլոր դատական ատյաններում: ***Սույն փաստը հաստատվում է*** *30.06.2023թ. փաստաբանական ծառայությունների մատուցման թիվ 27-32 պայմանագրով, ինչպես նաև 28.06.2023 թվականի լիազորագրով:*

3. Պայմանագրից բխող գործողությունների կատարման կապակցությամբ Փաստաբանը չի տեղեկացրել Դիմողին: ***Սույն փաստը հաստատվում է*** *Դիմողի բացատրությամբ: Միաժամանակ, չնայած Փաստաբանը հերքել է նշված հանգամանքը, այնուամենայնիվ, չի ներկայացրել որևէ ապացույց:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքների համաձայն՝ **Նարինե Բագրատի Մկրտչյանը** փաստաբան է հանդիսանում 23.10.2018 թվականից և 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Նարինե Բագրատի Մկրտչյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար հետևյալ պատճառաբանությամբ՝

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու

հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Դիմողներն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու և վստահորդի վստահությունը չարաշահելու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

- ***Արդյո՞ք փաստաբան Նարինե Մկրտչյանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Դիմողին.***
- ***Արդյո՞ք փաստաբան Նարինե Մկրտչյանը կանոնավորապես տեղեկացրել է Դիմողին հանձնարարության կատարման ընթացքի մասին:***

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողների և Փաստաբանների կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը, ինչի կապակցությամբ վերջիններիս միջև 30.06.2023 թվականին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման թիվ 27-32 պայմանագիր, որի համաձայն՝ Փաստաբանը պարտավորվել է հանդես գալ որպես լիազորված անձ ՀՀ բոլոր դատական ատյաններում կապված ժառանգության ընդունման հետ, ինչի կապակցությամբ Դիմողը վճարել է որոշակի գումար: Նշվածի կապակցությամբ Փաստաբանին 28.06.2023 թվականին տրվել է լիազորագիր՝ Դիմողի անունից պետական մարմիններում և դատական ատյաններում հանդես գալու համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված, Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են նաև մի շարք այլ պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի բարձր մասնագիտական պատրաստվածությունը և անհրաժեշտ գործնական փորձի առկայությունը, որի հետ էլ փոխկապակցված է վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականության պատշաճ կատարումը:

Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի բխում են կնքված պայմանագրի որոշակի առարկայից կամ վստահորդի կողմից տրված հստակ հանձնարարությունից, և արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար, ինչի հետ էլ փոխկապակցված է փաստաբանի և իր վստահորդի

միջև հարաբերություններում անհրաժեշտ որոշակիության և կանխատեսելիության ապահովումը:

Ըստ այդմ, փաստաբանի համար սահմանվում է նաև այլ պարտականություն, որը ենթակա է պահպանման հանձնարարության կատարման ընթացքում, այն է՝ կանոնավորապես տեղեկացնել հանձնարարության կատարման ընթացքի մասին:

Տվյալ դեպքում, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում վերը նշված պահանջների խախտմանը, Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողի և Փաստաբանի միջև կնքվել է պայմանագիր, որը ունեցել է հստակ առարկա: Ըստ այդմ, Փաստաբանը պարտավոր է ապահովել հանձնարարության կատարումը այդ առարկային համապատասխան:

Չնայած պայմանագրի առարկան որոշակի չէ և դրանից պարզ չէ, թե ինչ բովանդակություն պետք է ունենար գործը, այնուամենայնիվ, կարգապահական գործի շրջանակներում կողմերի ներկայացված դիրքորոշումներից պարզ է, որ այն վերաբերում է ժառանգության ընդունման հարցին, իսկ տրված լիազորագրով Փաստաբանը լիազորվել է հանդես գալ Դիմողի անունից ինչպես մի շարք պետական մարմիններում, այնպես էլ դատական ատյաններում, ինչն առնվազն վկայում է այն մասին, որ գործով նախատեսվել է Դիմողի շահերը պաշտպանել դատական կարգով:

Այս համատեքստում, կողմերը ներկայացրել են հակասական պնդումներ, որոնց հաշվառմամբ ի վերջո պարզ չէ, թե փաստացի ինչ գործողություններ է կատարել Փաստաբանն իրեն տրված հանձնարարության կապակցությամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանից պահանջվել են ապացույցներն առ այն, որ նա պատշաճ կերպով կատարել է ստանձնած պարտականությունները, սակայն վերջինս չի ներկայացրել որևէ ապացույց այն հիմնավորմամբ, որ գործի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը հանձնել է Դիմողին և իր մոտ այլ փաստաթուղթ առկա չէ:

Այս կապակցությամբ հարկ է փաստել, որ **Կանոնագրքի 2.11.2 ենթակետի համաձայն՝** *Փաստաբանական գործի պահպանման նվազագույն ժամկետը սահմանվում է երեք տարի՝ գործի ավարտից հետո: Փաստաբանական գործը կարող է պահվել էլեկտրոնային եղանակով:*

Նշված կանոնից հստակ հետևում է փաստաբանական գործի վարման ու պահպանման պահանջը, ինչը որևէ կերպ չի խոչընդոտում Դիմողին վերադարձնել նրա կողմից տրամադրված կամ Փաստաբանի կողմից ձեռքբերված փաստաթղթերը: Ըստ այդմ, դրա հաշվառմամբ, Փաստաբանն առնվազն պարտավոր է պահպանել Դիմողի փաստաբանական գործը, որպիսի պայմաններում նույնիսկ եթե տրամադրեր Դիմողին վերջինիս փաստաթղթերը, ապա միևնույն է պետք է իր մոտ պահպաներ գործի նյութերի պատճենները, ինչով պայմանավորված էլ կունենար հնարավորություն տրամադրել կարգապահական գործի շրջանակներում նրանից պահանջված նյութերը:

Հենց այդ փաստաթղթերի առկայության պայմաններում կարելի էր հաստատված համարել Դիմողին որևէ ծառայություն մատուցված լինելու փաստը, մինչդեռ հակառակ պայմաններում, ստացվում է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը, սակայն այդ կապակցությամբ որևէ գործողություն չի կատարել, իսկ

որոշ գործողությունների կատարման վերաբերյալ ներկայացնում է միայն իր պնդումները, ինչն առնվազն բավարար չէ բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու Փաստաբանի պարտականությունն ապահովված համարելու համար:

Անդրադառնալով հանձնարարության կատարման ընթացքի մասին Դիմողին կանոնավորապես չտեղեկացնելու Փաստաբանի վարքագծին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ այդ մասով ևս գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Դիմողի և Փաստաբանի միջև առկա է եղել որոշակի կապ:

Ընդ որում, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ չնայած Փաստաբանը հղում է կատարում այն հանգամանքին, որ Դիմողը բնակվել է գրասենյակին մոտ և անհրաժեշտության դեպքում անձամբ այցելել է Փաստաբանին՝ ստանալով պարզաբանումներ, այնուամենայնիվ, կարգապահական գործի հանգամանքներն այնպիսին են, որ Դիմողի և Փաստաբանի հաղորդակցվելու փաստը որևէ կերպ հնարավոր չէ հաստատել:

Ավելին, բոլոր այն դեպքերում, երբ խոսքը գնում է հանձնարարության կատարման վերաբերյալ, ապա դրա ընթացքում Փաստաբանն առնվազն պարտավոր է իր վստահորդին հայտնել այն նվազագույն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է գործի հետագա ընթացքի համար:

Այսինքն, քննարկման առարկա հանդիսացող իրավիճակում, Փաստաբանը ստացել է լիազորագիր՝ այդ թվում ՀՀ նոտաների մոտ հանդես գալու համար, սակայն ինչպես հայտնել է կարգապահական հանձնաժողովի նիստին, չի ունեցել նոտարական կարգով հաստատված լիազորագիր, որպիսի պայմաններում ոչ միայն պարզ չէ, թե ինչպես պետք է գործեր Փաստաբանը նոտարի հետ հարաբերություններում, այլ նաև նշված հանգամանքը բացահայտելու պայմաններում ինչ գործողություններ է ձեռնարկել առկա խնդրի մասին Դիմողին տեղեկացնելու և դրան լուծում տալու ուղղությամբ, ինչը սակայն չի ապահովել:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի ու Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ փաստաբան Նարինե Բագրատի Մկրտչյանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.6.1-ին ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները**:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) փոգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովն ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Հանձնաժողովը հաշվի է առնում փաստաբան Նարինե Բագրատի Մկրտչյանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է՝ «նկատողություն», կարգապահական տույժի տեսակները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Նարինե Բագրատի Մկրտչյանի (արտոնագիր՝ թիվ 2479) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի,

ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.6.1-ին ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25065-2-Ա
16 հուլիսի 2025թ.
ք.Երևան